ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>

   Հովհաննես Նավասարդյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ</u>

   ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>

   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) 2018թ. օգոստոսի 20-23-ը

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>

   Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) գրասենյակ

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

   Մասնակցություն «Աշխատանքի ոլորտում իրավական կարգավորումը և նորմերի պահպանման ապահովումը՝ որպես աշխատանքի արտադրողականության և մրցունակության բարձրացման միջոց» թեմայով Աշխատանքի միջազգային կազմակերպության ենթատարածաշրջանային եռօրյա, բարձր մակարդակի համաժողովին:

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>

Համաժողովի ընթացքում քննարկվել են աշխատանքի արտադրողականության և մրցունակության բարձրացման, աշխատուժի շուկան կարգավորող մեխանիզմների կատարելագործման, ազգային կարողությունների մշակման, ձեռնարկությունների մրցունակության և աշխատանքի արտադրողականության բարձրացման, միջազգային աշխատանքային նորմերի, աշխատանքային օրենսդրության՝ որպես աշխատանքի արդյունավետության խթանիչ ուժի և մրցունակության բարձրացման, աշխատանքի պայմանների բարելավման, աշխատանքի պայմանների պահպանման և արդյունավետության բարձրացման, աշխատանքային ներուժի կառավարման, աշխատանքի տեսչության կանխարգելիչ, խորհրդատվական և վերահսկիչ գործառույթների վերաբերվող հարցեր:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

Հանդիպումներ են տեղի ունեցել համաժողովի մասնակից երկրների ներկայացուցիչների և կազմակերպիչների հետ, քննարկվել, տեղեկատվություն է փոխանակվել աշխատանքի պայմանների բարելավման և աշխատանքային ոլորտը համակարգող մարմինների դերի արդյունավետության վերաբերյալ: Կարևորվել է աշխատանքային իրավունքը կարգավորող օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանությունը միջազգային Կոնվենցիաների դրույթներին:

8. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Աշխատանքի ոլորտում քաղաքականության մշակման և իրականացմանը վերաբերվող Կոնվենցիաներից «Արտադրության և առևտրի աշխատանքի տեսչության մասին» Կոնվենցիան (N 81) վավերացվել է մասնակից երկրներից վեցի կողմից: Այն դեռևս չեն վավերացրել Վրաստանն ու Ուզբեկստանը: Միևնույն ժամանակ, «Գյուղատնտեսության բնագավառում աշխատանքի

տեսչության մասին» Կոնվենցիան (N 129) վավերացրել են միայն Ադրբեջանն ու Ղազախստանը, իսկ «Աշխատանքային խնդիրների կարգավորման մասին» Կոնվենցիան՝ Հայաստանը, Ղրղզստանը և Ռուսաստանը:

Որոշվեց՝ այն մասնակից երկրները, որոնք դեռևս չեն վավերացրել այս բնագավառի Կոնվենցիաները, միանան դրանց:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ